

120 կգ զանգվածով պղինձի և անագի համաձուլվածքը պարունակում է 45 % պղինձ: Որքա՞ն մաքուր անագ պետք է ավելացնել այդ համաձուլվածքին, որ նոր ստացված համաձուլվածքում պղինձը կազմի 40 %:

Պատասխան՝ \_\_\_\_\_



ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՀԱՆՐԱՀԱՇԻՎ

ԹԵՍՏ 1

Մարզ /տարածաշրջան՝ .....

Դպրոց ..... Դասարան .....

Աշակերտ /ուհի / .....  
/ազգանուն, անուն, հայրանուն/

1) Տրված թվանշաններից ո՞րը պետք է գրված լինի \* -ի փոխարեն, որպեսզի  $512^*6$  հնգանիշ թիվը բաժանվի 4-ի:

- 1) 8
- 2) 5
- 3) 2
- 4) 4

2) Գտնել 12-ի ներկայացումը պարզ արտադրիչների արտադրյալի տեսքով:

- 1)  $2 \cdot 6$
- 2)  $3 \cdot 4$
- 3)  $2 \cdot 2 \cdot 3$
- 4)  $1 \cdot 2 \cdot 2 \cdot 3$

3)  $64$  մ<sup>2</sup> մակերես ունեցող բնակարանի հատակը ներկելու համար պահանջվում է  $21$  կգ ներկ: Քանի՞ կգ ներկ է անհրաժեշտ  $16$  մ<sup>2</sup> մակերես ունեցող խոհանոցի հատակը ներկելու համար:

- 1) 4
- 2)  $5\frac{1}{4}$
- 3)  $7\frac{1}{2}$
- 4) 3

4) Գտնել  $90$ -ի  $\frac{2}{5}$ -րդ մասը:

- 1) 64
- 2) 18
- 3) 72
- 4) 36

5) Գտնել  $|-8|+5,4:0,3-2\sqrt{9}$  արտահայտության արժեքը:

- 1) 4
- 2) 8
- 3) 20
- 4) 28

21) Գտնել ստուգողական աշխատանքից աշակերտների ստացած գնահատականների միավորների միջինը:

Պատասխան՝ \_\_\_\_\_


22) Գտնել  $\left(\frac{a+2}{a-2} + \frac{a-2}{a+2}\right) : \left(\frac{a^2}{a^2-4} + \frac{4}{a^2-4}\right)$  արտահայտության արժեքը:

Պատասխան՝ \_\_\_\_\_

23) Գտնել  $\sqrt{x-2} < 3$  անհավասարմանը բավարարող ամենափոքր բնական թիվը:

Պատասխան՝ \_\_\_\_\_

(19-21) Մյունակային դիագրամի միջոցով բերված են մաթեմատիկայից ստուգողական աշխատանքի կատարման արդյունքները:



19 Քանի՞ աշակերտ է մասնակցել ստուգողական աշխատանքին:

Պատասխան՝ \_\_\_\_\_

20 Քանի՞ աշակերտ է ստացել 7-ից բարձր միավոր:

Պատասխան՝ \_\_\_\_\_

6 Գտնել  $5 \cdot (-2)x^2 \cdot x^3$  միանդամի աստիճանը:

- 1) 5
- 2) 6
- 3) 2
- 4) 3

7 Գտնել  $4a^2b - 5b^2a + bba - 3aba$  բազմանդամի կատարյալ տեսքը:

- 1)  $a^2b - 4b^2a$
- 2)  $4a^2b - 5b^2a + b^2a - 3a^2b$
- 3)  $5a^2b - 8b^2a$
- 4)  $3a^2b - 2b^2a$

8  $a^{18} : a^3 \cdot (a^{-2})^4$  արտահայտությունը ներկայացնել ամբողջ ցուցիչով աստիճանի տեսքով:

- 1)  $a^{13}$
- 2)  $a^{17}$
- 3)  $a^7$
- 4)  $a^8$

9  $A$ -ն 9-ից փոքր և 4-ի վրա չբաժանվող բնական թվերի բազմությունն է, իսկ  $B$ -ն՝ 15-ից փոքր 3-ի վրա բաժանվող բնական թվերի բազմություն: Գտնել  $A \cap B$  հատումը:

- 1)  $\{3; 6\}$
- 2)  $\{3; 6; 12\}$
- 3)  $\{3; 6; 9; 12\}$
- 4)  $\{1; 2; 3; 5; 6; 8\}$

10  $kx + b = 0$  հավասարման վերաբերյալ  $n^{\circ}$  պնդումն է **ճիշտ**:

- 1)  $k \neq 0$  դեպքում հավասարումն արմատներ չունի:
- 2)  $k = 0, b \neq 0$  դեպքում հավասարումն ունի մեկ արմատ:
- 3)  $k = 0, b = 0$  դեպքում հավասարումն ունի անթիվ բազմությամբ արմատներ:
- 4)  $b \neq 0$  դեպքում հավասարումն ունի երկու արմատ:

11 Լուծել  $|x-1| \leq 4$  անհավասարումը:

- 1)  $[-5; 3]$
- 2)  $(-\infty; -5] \cup [3; +\infty)$
- 3)  $[-3; 5]$
- 4)  $(-\infty; -3] \cup [5; +\infty)$

12 Լուծել  $x^2 + 2x - 3 = 0$  հավասարումը:

- 1)  $\{-3; -1\}$
- 2)  $\{-3; 1\}$
- 3)  $\{-1; 3\}$
- 4)  $\{1; 3\}$

13 Չամբյուղում կա 2 կանաչ և 3 կարմիր խնձոր: Չամբյուղից մեկ պատահական խնձոր են վերցնում: Գտնել այն պատահույթի հավանականությունը, որ վերցրած խնձորը կլինի կարմիր:

- 1)  $\frac{1}{3}$
- 2)  $\frac{1}{2}$
- 3)  $\frac{3}{5}$
- 4)  $\frac{2}{5}$

(14-17) Ֆունկցիան տրված է  $y = \frac{-2x^2 + x}{x}$  բանաձևով:

14 Գտնել ֆունկցիայի որոշման տիրույթը:

- 1)  $(-\infty; 0,5) \cup (0,5; +\infty)$
- 2)  $(-\infty; 0,5)$
- 3)  $(-\infty; 0) \cup (0; +\infty)$
- 4)  $(-\infty; +\infty)$

15 Ո՞ր քառորդներում է դասավորված ֆունկցիայի գրաֆիկը:

- 1) I, II և III
- 2) I և II
- 3) III և IV
- 4) I, II և IV

16 Գտնել ֆունկցիայի արժեքը 2 կետում:

- 1) -1
- 2) 0,5
- 3) -3
- 4) 1,5

17 Ֆունկցիայի գրաֆիկը ո՞ր կետում է հատում  $Ox$  առանցքը:

- 1)  $(0; -0,5)$
- 2)  $(0,5; 0)$
- 3)  $(0; 1)$
- 4)  $(1; 0)$

18 Հայտնի է, որ քրոջ և եղբոր տարիքների տարբերությունը 3 է, իսկ գումարը՝ 15: Քանի՞ տարեկան է եղբայրը:

Պատասխան՝ \_\_\_\_\_